ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՕԳՈՍՏՈՍԻ 25-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐ-

1. Ժամը 9.00-ին Երևանից Վեհափառի աճյունը անպաշտոն կերպով փոխադրվում է Սուրբ Էջմիածնի Կաթողիկոսարան:

2. Ժամը 10.00-ին Վեհարանում կատարվում է Վեհափառ Հայրապետի զգեստավորումը և ապա Տաճ կարգը:

3. Ժամը 11.30-ին անպաշտոն կերպով համգուցյալ Հայրապետի աճյունը փոխադրվում է Երևանի Սուրբ Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի:

4. Ժամը 12.00-ին Սուրբ Սարգիս եկեղեցում կատարվում է հոգեհանգստյան արարողություն: Ժողովուրդը ամբողջ ցերեկը այցելում է եկեղեցի՝ իր հարգանքը մատուցելու հանգուցյալ Հայրապետին:

5. Ժամը 17.00-ին կատարվում է երեկոյան ժամերգություն և հոգեհանգստյան պաշտոն:

6. Ժամը 21.00-ին փակվում են Սուրբ Սարգիս եկեղեցու դռները:

7. Ժամը 22.00-ին Վեհափառ Հայրապետի աճյունը տեղափոխվում է եկեղեցուց:

ՕԳՈՍՏՈՍԻ 26-ԻՆ, ՈՒՐԲԱԹ ՕՐ-

1. Ժամը 7.00-ին Վեհափառի աճյունը կրկին փոխադրվում է Սուրբ Սարգիս եկեղեցի:

2. Նույն օրը, ժամը 10.00-ին աճյունը դուրս է բերվում Սուրբ Սարգիս եկեղեցուց և երկու տեղ դադար առնելով՝ թափորով Հաղթանակի կամրջի վրայով տարվում է մինչև Կիլիկիայի հատուղին՝ այնտեղից ավտոմեքենաների շարասյունով համբընթաց փոխադրվելու համար դեպի Սուրբ Էջմիածին:

3. Էջմիածին քաղաքի Կոմիտասի անվան հրապարակից դարձյալ թափորով և մայրավանքի դարպասից սկսած հինգ տեղ դադար առնելով, աճյունը բերվում է Մայր Տաճար:

4. Ժամը 18.00-ին Մայր Տաճարում կատարվում է երեկոյան ժամերգություն և հոգեհանգիստ:

5. Օգոստոսի 26-ին և 27-ին, ուրբաթ և շաբաթ օրերին ժողովուրդը Մայր Տաճարում հրաժեշտի այցելություն է տալիս իր հանգուցյալ Հովվապետին:

Այդ օրերին Մայր Տաճարում պարբերաբար կատարվում են արարողություններ:

Մայր Տաճարի կամարների տակ երգեհոնի կատարմամբ տևապես հնչելու են Սուրբ Պատարագի և հոգևոր երաժշտության մեղեդիներ:

6. Այդ օրերին հրաժեշտի այցելության համար ժողովրդի երթն սկսվում է Սուրբ Էջմիածնի վանքի գլխավոր դարպասից մեկ ուղղությամբ: Հավատացյալները մուտք են գործում Մայր Տաճար հարավային դռնով և դուրս գալիս Տաճարի հյուսիսային դռնով, ու ժամացույցի աշտարակի դարպասով:

<u>ՕԳՈՍՏՈՍԻ 28-ԻՆ, ԿԻՐԱԿԻ ՕՐ-</u>

1. Ժամը 10.00-ին սկսվում է Սուրբ Պատարագը:

2. Սուրբ Պատարագի ընթացքում կատարվում է վերջին Օծման կարգը:

3. Այդ ընթացքում հրավիրյալները Տաճարում լուռ աղոթքներով մասնակցում են Սուրբ Խորհրդին:

4. Արարողությունների ավարտից հետո հանգուցյալի աճյունը դուրս է բերվում Տաճարի արևմտյան մայր դռնից և թափորով, հյուսիսային կողմից պտույտ կատարելով Տաճարի շուրջը, տարվում է արևմտյան կողմը, զանգակատան կողքին նախապես պատրաստված գերեզմանափոսի մոտ:

Մինչ այդ հրավիրյալները եկեղեցուց դուրս գալով տաճարի հարավ-արևմտյան մասի փոքրիկ հրապարակում՝ գրավում են իրենց համար նախապես պատրաստված տեղերը:

5. Գերեզմանի մոտ կատարվում է թաղման կարգը, որի ընթացքում, մինչև աճյունի փոսն իջեցնելը, արտասանվում են դամբանական խոսքեր:

6. Ժամը 18.00-ին Երևանում, "Արմենիա" հյուրանոցի նաշասրահում, ի հարգանս հանգուցյալ Հայրապետի, տրվում է հոգեհաշ շուրջ 300 հրավիրյալների համար:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

19 Օգոստոս 1994